ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

04-ը նոյեմբերի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Սոցիալական աշխատողի օրվա առիթով

Նոյեմբերի 4-ին Հայաստանում նշում ենք սոցիալական աշխատողի օրը, որի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ բոլոր սոցաշխատողներին: Հասարակության մեջ առկա բազմաթիվ ու տարաբնույթ հիմնախնդիրներ մեծապես բացահայտվում և լուծում են ստանում սոցիալական աշխատողի սրտացավ, հմուտ ու շնորհակալ գործունեության արդյունքում:

Մասնագիտական օրվա առիթով առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժնի, Աբովյանի երեխաների աջակցության կենտրոնի աշխատակիցներին, Աբովյանի միասնական սոցիալական ծառայության աշխատակազմին և համայնքում սոցիալական աշխատանք կատարող բոլոր մասնագետներին, որոնց ուշադրության կենտրոնում են համայնքի կարիքավոր և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց ու ընտանիքների խնդիրները: Միևնույն ժամանակ համայնքապետարանի սոցիալական աշխատողները շարունակում են համագործակցել ու իրականացնել բազմաթիվ ծրագրեր տեղահանված արցախցիներին աջակցելու նպատակով:

Կարևորում և գնահատում ենք սոցաշխատողների բարեխիղճ ու պատասխանատու ծառայությունը, որն ուղղված է սոցիալապես խոցելի, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, երեխաների, տարեցների, ու ընտանիքների կյանքի որակի բարելավմանը:

Կրկին շնորհավորում եմ սոցիալական աշխատողներին մասնագիտական օրվա առիթով, մաղթում եմ բարեկեցություն և հաջողություններ մարդասիրական աշխատանքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ